

**Հարց** Ի՞նչ է նշանակում տնտեսավարող սուբյեկտի կամ նրա գործունեության վարկաբեկում:

**Պատասխան** Ձեռնարկատիրական գործունեության վերաբերյալ ցանկացած կեղծ կամ անհիմն հայտարարություն, որը վարկաբեկում է կամ կարող է վարկաբեկել տնտեսավարող սուբյեկտին, նրա գործունեությունը կամ առաջարկած ապրանքները, համարվում է անբարեխիղճ մրցակցության գործողություն: Տնտեսավարող սուբյեկտի կամ նրա գործունեության վարկաբեկումը կարող է ծագել ապրանքների գովազդմանը կամ տարածմանը նպաստող միջոցառումների իրականացման ընթացքում և մասնավորապես, տեղի ունենալ ապրանքների՝

- արտադրության գործընթացի,
- որոշակի նպատակի համար դրանց պիտանիության,
- որակի, քանակի կամ այլ բնութագրերի,
- առաջարկման կամ մատուցման պայմանների,
- գնի կամ դրա հաշվարկման եղանակի նկատմամբ: